ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-23-ԱՈ-18
2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, ՍՏԵՓԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, ՍՈՒՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ, ՎԱՐԴԱՆ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ, ՄԱՄԻԿՈՆ ԴՐՄԵՅԱՆԻՆ, ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ԷԴԳԱՐ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ԵՎ ՆԱԽՇՈՒՆ ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻՆ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՏՈՒՇ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 3-րդ մասով, 150-րդ հոդվածի 1-ին մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. «Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ռուզաննա Հակոբյանին, Ստեփան Միքայելյանին, Սուրեն Անտոնյանին, Վարդան Ավանեսյանին, Արտակ Բարսեղյանին, Մամիկոն Դրմեյանին, Գոռ Հակոբյանին, Տիգրան Պետրոսյանին, Էդգար Սեդրակյանին և Նախշուն Տավարացյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության վերաբերյալ» Արդարադատության նախարարի միջնորդության քննությունը նշանակել 2019 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 12^{00}-ին:

2. «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արտուշ Գաբրիելյանին կարգահապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության վերաբերյալ» ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդության քննությունը նշանակել 2019 թվականի մայիսի 16-ին՝ ժամը 12^{00}-ին:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2019թ. ապրիլի 22
ք. Երևան